
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓԱԹԵԹ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ:

Բովանդակություն

1.«Քաղաքական երկխոսություն» կազմակերպության մասին.....	3
2. Ծրագրի մասին.....	4
3. Արագածոտնի մարզի աշխատանքային խմբի քննարկումներ.....	4
4. Առաջարկներ.	5
5. Աշխատանքային խմբի անդամներ.....	7

Կազմակերպության մասին

«Քաղաքական երկխոսություն» կազմակերպությունը հիմնադրվել է 2018 թվականին՝ Թավշյա հեղափոխությունից հետո՝ նպատակ ունենալով ուղղել հասարակության մեջ կուտակված քաղաքական էներգիան Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարացմանը ու մարդու իրավունքների պաշտպանությանը: Համոզված ենք, որ ամուր ժողովրդավարության համար քաղաքացիական հասարակությունը, քաղաքական ուժերը և պետական կառավարման մարմինները պետք է սերտ համագործակցեն և երկխոսեն:

ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Մեր առաքելությունն է նպաստել քաղաքացիների հետևողական մասնակցությանը քաղաքական գործընթացներին, ինչի շնորհիվ հնարավոր կլինի հասարակության մեջ արմատավորել հաշվետու կառավարման և գիտակից որոշումների կայացման արժեքները:

ՄԵՐ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1. Նորարարական միջոցներով Հայաստանում ձևավորել գաղափարահեն քաղաքական դիսկուրս՝ հասարակության ակտիվ շերտերի, քաղաքական ուժերի և պետական ինստիտուտների միջև:
2. Ջարգացնել քաղաքացիական հասարակության և քաղաքական ուժերի միջև երկխոսության հարթակը:
3. Քաղաքականությունը մոտեցնել քաղաքացուն՝ այն ավելի մատչելի դարձնելով:
4. Նպաստել ժողովրդավարական մեխանիզմների իրացմանը՝ հանրային շահի լոբբինգի միջոցով:

Ծրագրի մասին

«Քաղաքականությունը ավելի մոտ քաղաքացուն» ծրագրի նպատակն է նպաստել ներքևից վերև ժողովրդավարության իրացմանը՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների պոտենցիալի օգտագործմամբ: Ինչպես նաև ծրագրի նպատակներից է բարձրացնել մարզի քաղաքացիների քաղաքական գիտակցությունը և իրազեկվածությունը, հաստատել ուղիղ կապ պաշտոնյաների և նրանց ընտրողների միջև: «Քաղաքական երկխոսություն» կազմակերպության նախաձեռնությամբ ՀՀ հինգ մարզերում կազմակերպվում են աշխատանքային քննարկումներ մարզերում գործունեություն ծավալող հասարակական կազմակերպությունների և ակտիվ քաղաքացիների մասնակցությամբ: Ինչպես նաև, ծրագիրը նպատակ ունի ցույց տալ քաղաքացիներին, որ իրենք կարող են հասնել փոփոխությունների իրենց իսկ նախաձեռնությամբ և ազդել որոշումների կայացման վրա:

Քննարկումների ընթացքում՝ ձևավորված աշխատանքային խումբը վեր է հանում մի շարք խնդիրներ և կոնսենսուսային սկզբունքով ընտրում մարզին հատուկ մեկ խնդիր: Այնուհետև, աշխատանքային քննարկումների արդյունքում մշակվում է այդ խնդրի լուծման առաջարկությունների փաթեթը: Փաթեթի մշակումից հետո մարզում կազմակերպված հանդիպման ընթացքում այն ներկայացվում է տեղական ինքնակառավարման մարմիններին, գործադիրի համապատասխան գերատեսչություններին, ԱԺ պատգմանավորներին, ԶԼՄ ներկայացուցիչներին:

Վերջնական փաթեթը կազմելուց հետո «Քաղաքական երկխոսություն»-ը հետամուտ է լինելու խնդրի լուծմանը նպաստելուն:

Ծրագիրը իրականացվում է Նիդերլանդների թագավորության արտաքին գործերի նախարարության ֆինանսավորմամբ:

Արագածոտնի մարզի աշխատանքային քննարկումներ

«Քաղաքական երկխոսություն» կազմակերպության մարզային ծրագրի շրջանակներում Արագածոտնի մարզի Թալին քաղաքում 2019 թ. հոկտեմբերի 6-ին կազմակերպվել էր աշխատանքային քննարկում՝ մարզի ակտիվ քաղաքացիների և մարզում գործունեություն ծավալող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Կազմակերպությունը քննարկումներում ներգրավվել է տարբեր ոլորտների ներկայացուցիչների՝ քաղհասարակության ներկայացուցիչներ, կրթության, ֆինանսական ոլորտի փորձագետներ, ուսուցիչներ, ուսանողներ, մասնավոր ոլորտի աշխատակիցներ, տարբեր քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներ և այլն: Քննարկմանը մասնակցել են Արագածոտնի մարզի տարբեր քաղաքաների և համայնքների բնակիչներ: Հանդիպման ընթացքում, ինչպես նաև աշխատանքային խմբի հետ հետագա մեկամսյա աշխատանքի արդյունքում վեր են հանվել Արագածոտնի մարզին առնչվող մի շարք խնդիրներ և աշխատանքային խմբի մասնակիցները կոնսենսուսային սկզբունքով ընտրել են մարզին հատուկ մի քանի խնդիր, որոնք մեծապես կապված են տուրիստական ոլորտի հետ և մշակել են մարզի տուրիստական զարգացմանը խոչընդոտող խնդիրների լուծման առաջարկությունների փաթեթ: Այնուհետև, սույն թվականի նոյեմբերի 21-ին վերոնշյալ առաջարկությունների փաթեթը ներկայացվել է որոշում կայացնողներին, մասնավորապես՝ Ազգային ժողովի, Էկոնոմիկայի նախարարության և Արագածոտնի մարզպետարանի ներկայացուցիչներին: Փաթեթի ներկայացումից և քննարկումից հետո այն լրամշակվել է: Արագածոտնի աշխատանքային խումբը առանձնացրել է ներքոնշյալ խնդիրները՝

- **Մարզի պատմամշակութային հուշարձաններ ուղղորդող վահանակների և ցուցանակների բացակայություն Արագածոտնի մարզով անցնող**

«Հյուսիս-Հարավ» ավտոճանապարհին, որը հանգեցնում է վերոնշյալ պատմամշակութային հուշարձանների մասին տեղեկատվության պակասի

«Հյուսիս-Հարավ» ճանապարհային ծրագիրը մարզի զարգացման կարևորագույն ծրագրերից է, որի իրագործումը կնպաստի մարզի ռազմավարական նպատակների իրագործմանը: Չնայած ճանապարհային ծրագրի իրագործումը հնարավորություն կտա զարգացնել տնտեսական համագործակցությունը, հեշտացնել մարդկանց տեղաշարժը և այլն, ռազմավարությունը չի հստակեցնում, թե տվյալ ճանապարհային ծրագրի իրականացումը, ինչ ազդեցություն կունենա մարզի տուրիստական և մշակութային զարգացման վրա: Աշխատանքային խումբը պնդում է, որ ճանապարհային ծրագիրը կարող է օգտագործվել ի օգուտ տուրիզմի խթանման: Քննարկման ընթացքում Էկոնոմիկայի նախարարության ներկայացուցիչը համաձայնվել է խնդրի կարևորության հետ և մատնանշել, որ ուղղոնդող վահանակների տեղադրումը նախարարության ռազմավարական նպատակներից է:

- **Մարզի պատմամշակութային հուշարձանների մասին տեղեկատվության և իրազեկվածության պակաս**

Արագածոտնի մարզը հարուստ է մի շարք պատմամշակութային հուշարձաններով: Մարզում են գտնվում մի քանի վանական համալիր, կիկլոպյան, մ. թ. ա. III-ի հազարամյակի բնակատեղիներ, ուրարտական ամրոցներ, նշանավոր եկեղեցիներ, խաչքարեր, բնության հուշարձաններ, գյուղատեղիներ, որոնք, ցավոք, հայտնի չեն քաղաքացիներին և զբոսաշրջիկներին:

- **Թալինի Կաթողիկե եկեղեցու չօգտագործվող տուրիստական ներուժ**

Թալինի Կաթողիկե եկեղեցին վաղ միջնադարյան հայկական ճարտարապետության եզակի հուշարձաններից է: Գտնվում է Թալին քաղաքի հյուսիսային մասում: Համալիրը բաղկացած է Կաթողիկե և բազիլիկ եկեղեցիներից, պալատական կառույցից և գերեզմանոցից: Եկեղեցին ունի տուրիստական մեծ գրավչություն և պոտենցիալ: Այդ պոտենցիալը լիարժեք իրականացնելու համար անհրաժեշ է կատարել եկեղեցու տարածքի

բարեկարգման աշխատանքներ: Վերոնշյալ խնդիրների լուծման համար աշխատանքային խումբը մշակել է հետևյալ **առաջարկությունները՝**

- ❖ Արագածոտնի մարզով անցնող «Հյուսիս-հարավ» ավտոճանապարհի երկայնքով տեղադրել դեպի մարզի պատմամշակութային հուշարձաններ ուղղորդող վահանակներ (խնդրի հասցեատեր՝ **Տարածքային կառավարման և ենթակառուցների նախարարություն և Ջրոսաշրջության պետական կոմիտե)**)
- ❖ Պատրաստել հեռուստա և ռադիոհոլովակներ, տեղադրել գովազդներ սոցիալական հարթակներում մարզի պատմամշակութային ժառանգության վերաբերյալ (խնդրի հասցեատեր՝ **Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն ՊՈԱԿ**)
- ❖ Կատարել Թալինի Կաթողիկե եկեղեցու տարածքի բարեկարգման աշխատանքներ (խնդրի հասցեատեր՝ **Թալինի համայնքապետարան**):

Արագածոտնի մարզի աշխատանքային խումբ

Նարեկ Թութխայան, «Համայնքը և երիտասարդները» Երիտասարդական
Խորհրդատվական ՀԿ

Անահիտ Սիմոնյան, «Համայնքը և երիտասարդները» Երիտասարդական
Խորհրդատվական ՀԿ

Արմեն Բաղդասարյան, անհատ

Նանա Մաթևոսյան, անհատ

Մերի Մաթևոսյան, անհատ

Սոնա Մալխասյան, անհատ

Ժորա Սափեյան, անհատ

Վարդանուշ Հակոբյան, անհատ

Սաթենիկ Սաֆարյան, անհատ

Թաթոս Աբրահամյան, անհատ

Ռուբեն Բեգլարյան, անհատ

Էդգար Տերտերյան, անհատ

Միասնիկ Սաֆարյան, անհատ

